ՀԵՏԱՔՐՔՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՀՐԱՎԵՐ

(ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ – ԱՆՀԱՏ ԽՈՐՀՐԴԱՏՈՒՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ)

Հայաստանի Հանրապետություն
«Օժանդակություն ինստիտուցիոնալ կորողությունների զարգացմանը՝ հանքարդյունաբերության ոլորտում բնապահպանական կառավարումը, ներառումը և թափանցիկությունն ապահովելու նպատակով» դրամաշնորհային ծրագիր
ԴՐԱՄԱՇՆՈՐՀ՝ No. TF013658

Խորհրդատվական ծառայության անվանումը՝ «ՇՄԱԳ-ի դրույթների կիրարկման ուղեցույցի» և «Հանքարդյունաբերության հավաքական/գումարային ազդեցության գնահատման ուղեցույցի» պատրաստման խորհրդատու

Փաթեթի համարը (համաձայն գնումների պլանի)՝ EGITMS C- 2.1.1.1

Հայաստանի Հանրապետությունը ՀԲ-ից ստացել է «Օժանդակություն ինստիտուցիոնալ կորողությունների զարգացմանը՝ հանքարդյունաբերության ոլորտում բնապահպանական կառավարումը, ներառումը և թափանցիկությունն ապահովելու նպատակով» դրամաշնորհային ծրագիր և մտադիր է այդ միջոցների մի մասն օգտագործել խորհրդատվական ծառայությունների մատուցման դիմաց:

ՀՀ բնապահպանության նախարարության «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկը IDF դրամաշնորհային ծրագիրն իրականացնող գործակալությունն է՝ ներառյալ ծրագրի հիմնական գործողությունների շրջանակներում նախատեսված պարտականությունների ապահովումը:

Խորհրդատվական ծառայությունները (այսուհետ Ծառայություններ) ներառում են աջակցություն «ՇՄԱԳ-ի դրույթների կիրարկման ուղեցույցի» և «Հանքարդյունաբերության հավաքական/գումարային ազդեցության գնահատման ուղեցույցի» պատրաստումը, այդ թվում

վերապատրաստումների ծրագիրը և դրանց իրականացման նպատակային վերապատրաստումը:
Սույն առաջադրանքի հիմնական նպատակն է աջակցել բարելավված ինստիտուցիոնալ կարողությանը և համագործակցությանը, և հետևաբար բարձրացնել թույլտվությունների շնորհման գործընթացների թափանցիկությունն ու արդյունավետությունը՝ համաձայն ՇՄԱԳ-ի օրենքի, դրա իրականացման և Վերահսկողության օրենքի դրույթների: Սույն խորհրդատվական ծառայության միջոցով տրամադրվող օժանդակության շահառուներն են ՀՀ ԲՆ և ՀՀ ԷԲՊՆ-ները, ինչպես նաև ՀՀ առողջապահության և ՀՀ էկոնոմիկայի նախարարությունները բարելավելու բնապահպանական կառավարումը, ներառումը և թափանցիկությունը Հայաստանի Հանրապետության հանքարդյունաբերության ոլորտում:

«Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկը համապատասխանող Անհատ *Խորհրդատուներին (այսուհետ՝ Խորհրդատուներ)* հրավիրում է ներկայացնել Ծառայությունների մատուցման հետաքրքրվածության հայտ: Հետաքրքրված Խորհրդատուները պետք է տրամադրեն ինքնակենսագրությունը և տեղեկություններ՝ ցույց տալով, որ վերոնշյալ Ծառայությունների մատուցման համար իրենք ունեն պահանջվող որակավորումներ և համապատասխան փորձ:
Կարճ ցուցակում ներգրավման (shortlisting) չափանիշներն են.

- Առնվազն մագիստրոսի կամ ավելի բարձր աստիճան ցանկացած հետևյալ ոլորտներից՝ բնապահպանական քաղաքականություն և գիտություններ, լեռնահանքային ինժեներ, բնապահպանական ինժեներ, հանրային կառավարում և այլ համապատասխան ոլորտում,

- Նվազագույնը 15 տարվա միջազգային աշխատանքային փորձ և փորձառություն բնապահպանական ռիսկերի և ազդեցությունների գնահատման բնագավառում, հանքարդյունաբերական գործողություններին առնչվող բնապահապնական կառավարում
- Առաջադրանքին առնչվող առարկայի ասպարեզում վերլուծական փաստաթղթերի և մեթոդական փաստաթղթերի մշակման ապացուցելի փորձ
- ՀԲ-ի այլ դոնոր կազմակերպությունների, ներառյալ ՀԲ-ի կողմից ֆինանսավորվող նմանատիպ ծրագրերի իրականացնելու փորձառություն կդիտարկվի որպես առավելություն,

- Միջազգային փորձի լավ իմացություն (բնապահպանական կառավարումը հանքարդյունաբերական գործողությունների ընթացքում, ընդերք, բնական պաշարներ, բնապահպանական

վերահսկողություն և այլն) կապված ՀՀ ՇՄԱԳ-ի և Հանքարդյունաբերական օրենսդրությանը,
- ՀՀ Բնապահպանական և Հանքարդյունաբերական օրենսդրության իմացություն,

Այլ անհրաժեշտ հմտություններ՝
- բանակցելու և խնդիր ներկայացնելու հմտություններ,
- աշխատանքներ ղեկավարելու և ուղղորդելու կարողություններ:
- Անգլերեն լեզվի վարժ իմացություն, ներառյալ գերազանց գրավոր հմտություններ

Հետաքրքրված խորհրդատուներին խնդրում ենք հատուկ ուշադրություն դարձնել Համաշխարհային Բանկի հունվարի 11-ի «Ուղեցույցի՝ ՎԶՄԲ փոխառությունների եւ ՄԶԱ վարկերի և դրամաշնորհների շրջանակներում Համաշխարհային Բանկի Փոխառուների կողմից Խորհրդատուների ընտրություն եւ աշխատանքի ընդունում» պարբերություն 1.9-ին (Խորհրդատուների ուղեցույց), որտեղ շարադրված է Համաշխարհային Բանկի քաղաքականությունը շահերի բախման վերաբերյալ:

Խորհրդատուների ընտրությունը կիրականացվի ՀԲ-ի Խորհրդատուների Ուղեցույցներում սահմանված «Անհատ Խորհրդատուների ընտրության» մեթոդի ընթացակարգերի համաձայն:

Հավելյալ տեղեկությունների համար դիմել ստորև ներկայացված հասցեով աշխատանքային ժամերին՝ 09:00-ից - 18:00:

Հետաքրքրվածության հայտերը պետք է ներկայացվեն ստորև ներկայացվող հասցեով (անձամբ, կամ փոստով, կամ ֆաքսով, կամ էլ-փոստով) մինչեւ 2014 թ.-ի ապրիլի 30-ը, ժամը 18:00 (տեղական ժամանակով):

պարոն Վիկտոր Մարտիրոսյան
«Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի տնօրեն,
ՀՀ բնապահպանության նախարարություն
ՀՀ, ք. Երևան, Արմենակյան 129, 0047
էլ-փոստ՝ info@cep.am
Հեռ՝ +37410 65 16 31
Ֆաքս՝ +37410 65 00 89